26ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 7170 — 8 ՕԳՈՍՏՈՍ 1909 — ՇԱԲԱԹ — 21 Août 1909 — 26me année — N. 7170

«ԱՐԵՒԵԼՔ»
ԽՄԲԱԳՐՈՒԹԵՍՆ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԿԱՐԵԿԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ
ՊՕՂԻՍ, ԳԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կ. Պոլսոյ համար տարեկան	60 Ղ.
» » վեցամսեայ	45 »
Գաւառներու համար տարեկան	106 »
» » վեցամսեայ	60 »
Օտար երկիրներու համար տարեկան	25 Ֆր.
» » վեցամսեայ	16 »

Փո

տարի ծախքը մեր վրայ

10 ՓԱՐԱ

Արեւելք

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ

10 PARAS

آره‌ولك
ارمنیجه یومی و سیاسی غزته
صاحب امتیازی قره‌کین بویاجیان
درعلیه قلطه

AREVELK
JOURNAL ARMÉNIEN
Directeur-Propriétaire
KARÉKIN BOYADJIAN
Cons/ple, Galata

ՅԱՒԻ ԱՇԽԱՐՀԷՆ

ՄՈՒՇ, 16 Յուլիս

Զուլում, միշտ զուլում եղած է այս պատմական երկրին պատուական որդիներու ճակատագիրը. երկիր մը որու իւրաքանչիւր մէկ մասը, նոյն իսկ քարն ու հողը, լեռն ու դաշտը, ծառն ու ծաղիկը, իրենց չքնաղութեան մէջ դարձեալ ախի՛ ու վախի՛ դատապարտուած են, որովհետեւ անգութ ու վայրագ ձեռքերը սովորած են անգթարար կտրել, ոչնչացնել, բնաջինջ ընել ու քարուքանդ դարձնել ինչ որ չէն է, ինչ որ օգտակար է և ինչ որ չինիչ է:

Եւ այսօր օսմանեան հայրենիքի քաջարի ախոյեանները միմիայն թող չպարծին կարմիր գազան Համիտի գահընկեցութեամբ մաքրագործուած տեսնել հայրենիքը, թող չպարծին թէ այսուհետեւ խաղաղութեան ու եղբայրութեան կենսաբեր դրօշը պարզուած է Օսմանեան մայր Հայրենիքին վրայ. իսկ ես կը տարակուսիմ, քանի որ երկրորդական գազաններ, ճիշդ միեւնոյն դիրքով, կը վխտան մեր զուլումի անտէր անտիրական երկրին մէջ, և առանց իրենց վայրագութեամբ միշտ տրամադիր են հայ երիտասարդներու արիւնով լուալ իրենց ձեռքերը, և յաղեցնել իրենց վայրագութեան պտուղը:

Տարի մըն է որ այս զուլումի երկրէն արդարութեան ձայներ կը բարձրանան մէկ քանի գլխաւոր զուլումքիար գազաններու դէմ, թէ մեր երկրին խաղաղութիւնը վրդովող, Սահմանադրութիւնը ոտնակոխ ընող և օսմանեան կառավարութիւնն իսկ չճանչցող բիրա ուժեր կան որոնք այս մութ անկիւններուն մէջ իրենց վայրագ նախնիներով այնքան հայ օճախներ մարեցին, և այնքան դուռ ու երդիք փակեցին թշուառութեան մէջ տուայտող հայ ընտանեաց վրայ: Եւ սակայն անլսելի մնաց:

Թուէս 20 օր առաջ Մուշի Վերին Թաղեցի Զաքար անուն անձը, որ նիւթականի անձկութեան պատճառաւ Դէնիկ գիւղը կը ընակէր, սիրտ առնելով Սահմանադրութեան Ազատութենէն, և մանաւանդ իր բազմանդամ ընտանեաց օրապահիկը հայթայթելու համար չիշեալ գիւղի Արիֆ պէյ կոչուած Թուրքին հետ դաւար գնելու կ'երթայ Բաղչոյ Հիզան գաւառը. առանց կը գիտնէրն նոյն գաւառի սերսահոչակ, արիւնռուշտ Սէյտ-Ալի կոչուած գաղանին տունը: Հայատեաց գազանը իմանալով սարաբախտ Զաքարի Հայ ըլլալը, հետեւեալ դաւադրութիւնը կը պատրաստէ: Առտուն Արիֆի ձին ախոռէն փախցնել տալով լուր կուտան Զաքարին թէ ձին փախաւ: Նոյն պահուն երբ Արիֆը նամազի վրայ է, հազիւ թէ 15 բոպէ, ձին հետապնդելու համար, Զաքար գիւղէն կը հեռանայ. Սէյտ-Ալիի տունէն երկու չարագործներ անոր թեւադրութեամբ հէք մարդուն վրայ կը վազեն օր ցերեկով ու վայրագութեամբ կը խողխողեն, և եղած դրամը կողոպտելով ետ կը դառնան: Կը տեսնէք թէ տակաւին օ՛րչալի դիւրին բան եղած է Հայի մը սպանումը, հաւէն ալ դիւրին: Գաղտնիքը դուրս չտալու համար՝ Արիֆն ալ իր տան մէջ կը բանտարկէ: Նոյն հրէշը ապրիլ 15ին սպաննել տուած է Օրթապցի երկու Հայեր, որոնք լուծքի դաւար գնելու համար գացեր են հոն:

Գիտէ՞ք թէ ո՛վ է Սէյտ-Ալի կոչուած հրէշը. Հայ պատմութեան սիրտը փեռեկտող, հայ կանայք ու կուսանք կատամարտող արիւնկալ Շէյխ-Զէլալեթտինի ազգն է: Վայրագ ոյժ մը որու հանդէպ տկար հծծիւն մը չի կրնար իր բարերար ազդեցութիւնը թողուլ և վրէժխնդրութիւն պահանջել, եթէ անոր հետ չմիանան Օսմ. Հայրենիքին ազատաբեր հերոսները՝ վրէժխնդրութեան ձայն բարձրացնելու, որպէսզի այդ զազիր չարագործ Սէյտ-Ալիներ, Ըռզախներ, Ցաթէէներ, Իպրահիմներ կախաղանի բարձրացուին ի սիրոյն թշուառ ժողովրդեան և ի հաստատութիւն Սահմանադրութեան. որովհետեւ Թումայի նման մինչեւ որ մատը վէրքին վրայ չդնենք՝ ա՛լ չենք հաւատար:

Ողբացեալ Զաքարի դժբախտ ամուսինը իր չորս որբերով և անոր եղբօրը այրի կինը իր երեք որբերով, որոնց միակ յոյսն ու ապաւէնն էր տարաբախտ Զաքարը, երբ կը լսեն այդ դժբախտութիւնը, հետեւեալ սրտաճմլիկ խնդրագիրը կուտան Տէր Խարախանեան Վ.ին և Հ. Ց. Դաշնակցութեան պատասխանատու մարմնոյն.

Դեր. Ս. Հայր,

«Գուժկանը բերաւ մեզ իմ դժբախտ ամուսնոյս՝ Զաքարի սպանման սեւ բօթը որ 20 օր առաջ Դէնիկ գիւղի Արիֆ պէկի հետ կ'երթար տաւար գնելու Բաղչոյ Հիզան գաւառէն:

«Եւ ինչպէս Սրբութեանդ ծանօթ է, թուէս 8 օր առաջ կը սպաննուի նոյն գաւառի տխրահռչակ եղեռնագործ, և հայ կեանքերու ու օճախներու քանդիչ զալիմ Սէյտ-Ալի կոչուած վատանուն հրէշէն:

«Ես իմ չորս անչափահաս որբերով, և այրի տիկերկինս իր երեք անչափահաս որբուկներով այս քանի օրուան լացի ու կոծի մէջ վերջ մը պիտի տայինք մեր կեանքերուն եթէ հնարաւոր միջոց մը գտնէինք, որովհետեւ ալ կորաւ մեր ճար ու ճամբան, վերջացաւ մեր ուժն ու արեւ, և մարեցաւ մեր տան օճախը:

«Ս. Հայր, եթէ մեր երկրին մէջ գութ ու արդարութիւն կայ, արդէն այսպիսի մարդախոշոշ գազաններ գոյութիւն չպիտի ունենան և հիմայ 10 անձէ բաղկացած ընտանիք մը այսպիսի անընկարագրելի դժբախտութեան մը չպիտի մատնուէր և անգութ ձեռքէ մը ողջ ողջ գերեզման չպիտի իջնէինք:

«Արդ՝ Ազգասէր Սբ. Հայր, ծայր աստիճան յուսահատ ենք, որովհետեւ երկրիս վրայ գտնուած մխիթարական ամէն միջոցներէ զուրկ, մենք երկու տկար աղախիններս մեր ուրբ որբերով կը դիմենք Ձեր և Հայ ազգին նուիրական զգացումներուն որ յանուն արդարութեան ձայն բարձրացնէք և իմ սարաբախտ ամուսնոյս Զաքարի սպաննող ոճրագործ զազիր Սէյտ-Ալի արարածը ներկայ սահմանադրական կառավարութեան չնորհիւ պատժել տալու և եղած դրամն յետ առնելու. Ջանքն ի գործ դնէք առ որ անկ է:

«Մեր վրայ կարեկցող ոչ բարեկամ մը և ոչ ալ ազգական մը ունինք, դուք էք մեր տէրը և Ազգը մեր իրաւանց պաշտպան. մեզ ալ մահ կամ մխիթարութիւն մը կ'աղերսենք:

«Արտասուաթոր աչքերով և դառնափսկիծ հեկեկանօք որբուկներովս ի միասին կը հաբուրենք Սուրբ Աղդ,

Դժբախտ այրի աղախին
ՀԱԿՈ ԶԱՔԱՐ

Այդ լուրը մեզ հաղորդեց հեռագրով, և ժամանամանութիւնն ալ նամակաւ՝ Բաղչոյ տեղապահ Եղնիկ վրդ., որ անմիջական դիմում ըրած է կառավարութեան՝ ոճրագործ Սէյտ-Ալին ձերբակալելու, սակայն դարձեալ կը կրկնենք լսելի չպիտի դառնայ, եթէ Ազգն համբրէն այդ զազիրներու ոչնչացումը չպահանջէ, որովհետեւ ատոնք են այս երկրին թագաւորն ու ու տէրը:

ՏԻԳՐԱՆ

* * *

ԱՐԹԽՈՆՔ-ՄՈՒՇ, 21 յուլիս

45 օրէ ի վեր է որ մենք Արթխոնցիներս բողոքեցինք տեղւոյս կառավարութեան և պահանջեցինք որ մեր գիւղը գտնուող 12 տուն քիւրտ աւազակ բռնակալներ վտարուին դուրս, քանի որ միւլք չունին և բռնակալ միջոցներուն եկած ու հաստատուած են գիւղս, և կը մատնակցին մեր աղա Ազիզի բռնակալութեան: Բայց տեղական կառավարութիւնը պաշտօնական լրախաղացութիւն մը ըրաւ ցարդ. իսարէի անդամներէն Տավրէշ էֆ. մեր բողոքներուն պատասխանելով մեզ կ'ըսէ. «Զէ՞ որ ձեր աղային ծառաներ (խուլամներ) պէտք են. այդ տունը հարուստ-ազնուական ու մեղիպէներուն հաց կերցնող տուն մըն է. ես կը գրեմ ու կը խօսիմ ձեր աղային՝ եթէ իրեն ծառայ պէտք չէ, կ'ուզէ թող հեռացնէ». միւս կողմէն կ'ըսէ Հայ Հոռոմականաց եպիսկոպոսը. «Այդ հարստահարիչ քիւրտերէն զատ միւլք ունեցող քիւրտեր կան գիւղը. աղան անոնցմէ իրեն թո՛ղ ծառայ վարձէ, քանի որ այս քիւրտերը պաճառ կ'ըլլան ժողովուրդի ինքնազարգացման:» Կը յարէ նաեւ հայ Նաղարէթ էֆ. «Այս քիւրտերը քանի որ գիւղացիներու ըսածին պէս հարուստ վաճառականներ են՝ և չէ թէ աղքատ ու ծառայութեան կարօտ, պէտք է ատոնք հեռացնել և գիւղացիին գլխին վրայէն այդ կրակը մարել. այս իրականութիւնները և ստուգութիւնները երբ երեւան ելան, անակնկալ դէպքերու պատճառաւ խնդիրը ընդմիջուեցաւ ու մինչեւ ալիք եղաւ «պուկիւն օլմազ եարըն կէլ» պաշտօնականի կարդ անցած խօսքերէ յետոյ: Այսպէս, մենք, խեղճ գիւղացիներս, շարաթներէ ի վեր կ'երթանք կուգանք և Մուշի սալայատակները կը չափչփենք ու փողոցներու անկիւններուն մէջ կը գիշերենք. այս երկար բարակ ձանձրութիւնը չկրցաւ զմեզ բաժնել մեր տուած բողոքի հետապնդումէն. աւելի լաւ համարեցինք գործը գլուխ տանիլ կամ գեղը թողուլ ու գաղթել ուրիշ երկիրներ, կամ հեռագրել Երեսփ. Ժողովին:

Վերջապէս մեր ամենօրեայ թախանձանքներով յոգնեցուցինք տեղական պաշտօնեաները, որոնք պարտաւորուեցան կանչել մեր գազան Ազիզը և հանձնել թէ ինչու չի թողուր որ քիւրտերը հեռանան գիւղէն. և ահա տեսարանը նորէն Իսարէի ժողովականներու առջեւն է. մենք ու մեր հակառակորդ Ազիզը դէմ դէմի ենք. մեր պահանջածին հակառակ կ'ըսեն Տէվրէշ էֆ. և հաճի Ալին.—Զէ՞ որ գիւղի երրորդ մասը ձեր աղային է—ոռեռեղէն կամ յայանի է, կը պնդէ մեր գազանը ժողովականներուն ըսելով. «Հարցուցէք թէ այս ներկայ գիւղացիներուն ու բողոքողներուն ինչն է մնացեր ձեռքերնին, ինչ հողի տէր են և ո՞ւր են եղեր ասոնցմէ մէկ քանիներ: Կը պատասխանուի. «Ճիշդ է, Ազիզ աղա, բաժդ, քանի որ մեր ունեցած ամէն մէկուն կալուածարտերը մէյմէկ կոտ փտած սեւ կկլով ու մէկ արծաթի սալաթով առած ես, մեր ամէն մէկ 20,000 ղրուշի արժէքաւոր արտերն ու պարտէզները և զմեզ ալ մեր գիւղէն վտարած ես գաղթավայրեր՝ չառկալով տարեկան ծառայութիւններուդ ու քու տուած կեղեքման. իրաւունք ունի՞ս մեր տուներն ալ խլելու մեր ձեռքէն, քանի որ դու ինքդ առաջ 4 կտորի տէր էիր իսկ այսօր 100-200ի տէր:» Խնդիրը, լուռ նստող կառավարչի խղճահարութեան ցոյցերէն ու նշաններէն կ'երեւակայուէր որ լուծուէր. սակայն անդամներէն թուրք Հաճի Ալին ինքնաբերաբար խնդրոյն առաջքը կտրելով, ըսաւ երկու կողմիս. «Դու կիւն օլմազ, փաշանքն իչի աղալաղը, եարբն թուքանըմըզատ կեալին, սըզի ուուշդրալըմ, պու օն էվատան ուշի պրախալըմ Ազիզէ խըզմբթքեար, օպրիլէր չեսնլար»: Ահա նորէն ժամադրուած օրն ու տեղն է. կ'առաջարկուի մեզ՝ «իքի թարաֆքնըզ սէս էթմէին, պրզ եարարբիս, սո՛ւս, սո՛ւս:» Որովհետեւ այդ առաւօտ մեր գազան Ազիզն իւղի բեռով այցելած է յիշեալներու տունները. և այն երեք տուն քիւրտերը որ ծառայ նշանակուած էին՝ ատոնց տներու թիւը բարձրացաւ ութի. իսկ մնացած երկու տնուորներ անպայման կերպով թող ելլեն ըսուեցաւ Ազիզին. ըսուեցաւ նաեւ «Սէն նէճիպ սէն, սէն սաբլ սէն». իրաւ է, աղնուական է մեր բռնակալ գազանը. որովհետեւ 32 տարի է որ գերիի նման կը ծառայեցնէ Արթխոնքի աղքատ ժողովուրդը, և երկրագործ երիտասարդի երկաթեայ թեւն ու թիկունքը հալ ու մաշ է Ազիզին և իրենցներու կամքի ու ոտքի տակ, և դեռ այսօր ու այս վայրկենին ալ 25է էն աւելի մշտական ձրի ծառաներ ունի իր տան մէջ, որոնց անթիւ ինչքը, անասունը, պատիւն ու մարդկային ազատութիւնը բռնաբարած է: Ահա թէ ի՛նչ կերպով կը լուծուի հողային հարցը գաւառներու մէջ, քանի որ Երեսփ. Ժողովը պէտք չտեսաւ Հայաստանի բարենորոգմանց յանձնաժողովին. ուրեմն ի՞նչ միջոցաւ պիտի լուծուին հողային հարցի պէս դժուարին խնդիրներ. եթէ տեղային պաշտօնեաներու բարեացակամութեան թողուի, անոնք կնճռոտել միայն կրնան և ոչ երբեք լուծել, քանի որ դատախազութիւնը դատաւորներու կողմէն է. այդչափ բողոքներէն վերջ դեռ կը մնան մեր գիւղ Արթխոնկի քիւրտերը Հայոց տուներու մէջ, հայ ընտանեաց հետ կուշտ կշտի: Եւ ասիկա զարմանալի չէ՝ երբ Իսարէի անդամներէն թուրք անդամ մը իր քսաց համաձայն խնդրոյ լուծումը չի թողուր նստող կառավարչի հրամանին և օրէնքի կիրառման:

ՍՈՂՈՄՈՆ Ս. ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԱՐԵՒԵԼՔ.—Պերլինէն երեքշաբթի օրուան թուականով հեռագրէ Թանի Թղթակիցը.—«Անգլիոյ Թագաւորը, երէկ, ընդունեց այցելութիւնը Ռուս Ներկայ Նախարարապետ Պ. Պրոդիանոյի, որ Բարլոպատ ժամանած է: Այդ տեսակցութենէն մասին Պերլիներ Թակեպլադ սա տեղեկութիւնները կը հաղորդէ.— Լուսաւորեալ է. պ. սրզեց Լոնտոնի դաշնիին կողմէ Պալքանի երու մէջ հետեւուած քաղաքականութեան ընդհանուր գիծերը և հաստատեց թէ Անգլիա Արեւելքի մէջ եսասէր նպատակներու հետամուտ չէ և թէ ամէն բանէ առաջ կ'ուզէ խաղաղութիւնը պահպանել: Լուսաւորեալ Թագաւորը յարեց թէ Անգլիա պիտի զգուշանար այն բանէն որոնք կրնան հակառակ գալ սահմանադրական Թուրքիոյ կանոնաւոր զարգացումին:»

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԱՆ.—Պերլիներ Թակեպլադի Վիեննայի թղթակիցը սայգ աղբիւրէ կ'իմանայ թէ ռուս կառավարութիւնը առայժմ ետ պիտի չքաշէ Պարսկաստանի մէջ իր ունեցած զինուորները: Ռուսիա այնպէս կը նկատէ թէ Պարսկաստանի վիճակը պէտք եղա ծին պէս խստակ չէ. և կը վախնայ նոր խռովութեանց ծագումէն, որոնք վտանգ մը կը կազմեն ռուս հպատակներու կեանքին և շահերուն համար:

ԸՆԿԵՐ ՎԱՐԱՆԱՆԻ ԿՈՒԻ.—Բէյրութ երեքշաբթի օրուան թուականով հեռագիր մը կ'ըսէ.— Խրուաթիոյ մէջ քաղաքական կացութեան մասին խորհրդակցելու հրաւիրուած ընկերվարական գումարում մը արգիլուելուն հետեւանքով, երէկ, արիւնալի կռիւ մը տեղի ունեցաւ Ակրամի մէջ ոստիկանութեան և տէմոքրատ-ընկերվարական գործաւորներու միջեւ. այս վերջինները կ'ուզէին արշաւել քրիստոնեայ-ընկերվարական կուսակցութեան վրայը: Մուտքը արգիլող ոստիկանները քարկոծուեցան, որով հարկադրուեցան իրենց զէնքերը գործածել: Քանի՞ չափ ցուցարարներ վիրաւորուեցան սուրով. ատանի չափ ալ ձերբակալուեցան:

ԽՈՌՈՒՄՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՌԼԱՆՏԱՑԻ ՄԷՋ.— Պէլֆասդէն առնուած հեռագրի մը նայելով, Բորդասաուն քաղաքին մէջ, Իրլանտայի հիւսիսային կողմը, ծանր չէոթութիւններ ծագեր են՝ ազգայնական ընկերութեան մը անդամներուն զբօսական պտոյտին առթիւ՝ երբ Թափօրով երկաթուղիի կայարանը կ'երթային: Հակառակ վեց հարիւր ոստիկաններու ներկայութեանը, ամբոխը յարձակեր է ազգայնականներուն վրայ: Ոստիկանները քարկոծուեր և ռէվոլվէրներ պարպուեր են: Ասպահիներ կոտրեր են: Ոստիկանները հարկադրուեր են յարձակեր կատարել մէկ քանի անգամներ: Բազմաթիւ վիրաւորներ կան, որոնց մէջ տասերկուքի չափ ոստիկաններ. ձերբակալութիւն չէ կատարուած:

ԱՆԳԼԻՈՅ ՆԱՒԱՏՈՐՄԸ.—Լոնտոնի մէջ գումարուող ազգային պաշտպանութեան ժողովը որոշեց որ Աւստրալիոյ դաշնակցութիւնը պատերազմական նաւատորմ մը ունենայ, խաղաղութեան ատեն՝ իր և պատերազմի ատեն ալ Մեծին Բրիտանիոյ տրամադրութեանը տակ ըլլալու պայմանով:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ.— Անգլիական մէկ քանի լրագիրներ կը ծանուցանեն թէ Գերմանիոյ կայսրը հրաւիրեր է Անգլիոյ առեւտրական նախարար Պ. Ուինսթընն Չըրչիլը՝ ներկայ գտնուելու Գերմանիոյ մեծ ռազմափորձերուն:

ՀՆԴԿԱՍՏԱՆ.—Կալկաթայէն կը հեռագրեն թէ ոստիկանութեան դերասանորէն մը, ոստիկան մը և տեղացի սպասաւոր մը սպաննուեր են Հարաոյի մէջ (Ուտի նահանգ) ուր քննութիւն մը կը կատարէին: Ուրիշ ոստիկան մըն ալ ծանրապէս վիրաւորուեր է:

ՀԱՐԱՒԱՑԻՆ ԱՓՐԻԿԷ.— Անգլիոյ Խորհրդարանին մէջ, երկուշաբթի, գաղթային խորհրդական Սիլի գնդապետը հոգոր կերպով պաշտպանեց հարաւային Ափրիկէի նոր Սահմանադրութիւնը: Ինչպէս յայտնի է, այդ Սահմանադրութիւնը թէ՛ Անգլիոյ և թէ հարաւային Ափրիկէի մէջ խռովիչ քննադատուեցաւ՝ ընիկներու իրաւունքին անունով: Երկու ցեղերու վերջնական միացումը իրականացնելու համար անգլիական գաղթականները հարկադրուեցան համակերպիլ հոլանտական գաղթականներուն պահանջումին թէ բնիկները խորհրդարանական ընտրելի պիտի չլլան: Սիլի գնդապետը խոստովանեցաւ որ այդ տրամադրութիւնը ցաւալի է, բայց յարեց թէ հարաւային Ափրիկէի միութիւնը այդ կերպով միայն կրնայ ըլլալ և թէ եղած թոյլատուութիւնը արդէն աւելի շատ առերեւոյթ է քան թէ իրական: Իրականապէս եթէ Բարեյոյսի գաղթականութիւնը ընիկներուն ընտրութեան իրաւունք տայ, ատոնք ընտրական մարմնոյն մէկ ութերորդը միայն կը կազմեն Բարեյոյսի մէջ և բնաւ չեն կրցած մտնել Բիւրգաուսի Խորհրդարանը: Միւս կողմէ նոր Սահմանադրութիւնը կը տրամադրէ թէ ընտրական իրաւունքները այն ատեն միայն կրնան փոխուիլ, երբ Եռեսփ. Ժողովը ու Ծերակոյտը համագումար նիստ կազմեն և երբ առաջարկեալ բարենորոգումը ատանց քուէներուն երկու երրորդ մասը: Արդ, Բարեյոյսի այդ գաղթավայրը, ամենէն բազմամարդը ըլլալով, ապահով է նէն իր հաւասարութիւնը ունենալու մեծամասնութիւնը և կարենալ պահպանելու իր ընիկներուն հիմնական ազատութիւններ: Իրաւ է ոչ կը մնայ հարաւային Ափրիկէի մէջ անգլիական անհուն թեւարկութեան հանդէպ վայրերու տեղական հատուկ խնդիրը: Այդ վայրերու տեղական հատուկ ութիւններ արդէն յուսուած են այն գաղափարէն թէ հարաւային ափրիկեան գաղափարէն թէ մը տրամադրութեանը պիտի Խորհրդարանի մը տրամադրութեանը պիտի ենթարկուին, սակայն Սիլի գնդապետը ենթարկուին: Սակայն Սիլի գնդապետը հնեց իր այն յայտարարութիւնը թէ կը [illegible] այն կառավարութիւնը չուզեր իր Անգլի[illegible]ական իրաւունքը ձեռքէ հանել [illegible] նախապէս բաղձացուած բո[illegible]թիւնները ստանալու թէ [illegible] հարցերը պիտի պաշտպանի [illegible]ներուն իրաւունքներ կամ ընկերվարական [illegible]ին: Ազատական [illegible] հակառակ, կան մէկ քանի դիտողութիւններ [illegible] մը օրինագիծը երկրորդ ընթերցումը [illegible] քուէարկուեցաւ ստուար մեծամեծամբ մը:

ՄԱՐՈՔ. — Թանճերէն երկուշաբթի օրուան թուականով կը հեռագրեն Բարիզի թերթերուն.—Մարոքի գահուն թեկնածու Ռոկիի պարտութիւնը հաստատուեցաւ: Մոլլա Հաֆիտի բանակը աւարի տուաւ անոր բանակեալը: Ռոկի փոքրաթիւ հետեւորդներով փախաւ: Հիւսիսային կողմը նորէն կազմակերպուելով մէկ քանի ամիսէն դարձեալ երեւան պիտի ելլէ իր պարբերական ձեւով: Մոլլա Հաֆիտ, այդ հակառակորդէն ազատած, Ռիֆով կը զբաղի: Կնքուած դաշնադրութիւններու համաձայն, Մարոքի կառավարութիւնը հարկադրուած է բարեկարգութիւնը պահպանելու համար զինուորական զօրութիւն մը ունենալ այն վայրերուն շուրջը, ուր Սպանիա կը զրկէ ռազմանակիր աշխատութեան դատապարտուածները: Այդ պարտականութեան չդիմադրուելուն հետեւանքովն է որ Սպանիա ստիպուեցաւ ինք կատարել վերջնական գործողութիւն մը: Մարոքի վեհապետը, այդ պատճառը կամ պատրուակը մէկ կողմ ընելու նպատակով, ստիպողական նամակներ կ'ուղղէ Ռիֆի ցեղերուն, յանձնարարելով որ մանաւանդ պաշտօնով իր կողմէ ղրկուած երեւելիներուն իշխանութեանը ենթարկուին: Էլ-Ֆասի կուսակալ Պակատէ և վեհապետին հօրեղբայրը՝ Մոլլա Պու Զէքիր պաշտօն ունին բանակցիլ թշնամութեանց դադարման համար: Այդ պարագային բանակ մը պիտի կազմուի՝ վերագրեալ թիւրաններուն չուրջը ապահովութիւնը պահպանելու համար: Ռիֆցիները անշուշտ պիտի չպատասխանեն Մոլլա Հաֆիտի բաղձանքներուն, որով Պակատէի պաշտօնը կ'երեւայ թէ պիտի չյաջողի, մանաւանդ որ Սպանիացիները ուժգնօրէն առաջ կը տանին պատերազմը, յանձնարարելով թէ հիմա որ և է հաշտութիւն ամօթալի պիտի ըլլայ, եթէ վրէժը չլուծէ հազարաւոր մեռեալներու և վիրաւորներու:

ԹԻՒՐԱՆԷՆ կը հեռագրեն թէ քաղաքին մէջ ընտրութիւնները վերջացած են: Ընտրուածներուն ամէնքն ալ յառաջդիմական են: Ատոնց մէջ կը գտնուի Պերլինի նախորդ դեսպան Էշրէֆ-իւ-Սալթանէ, որ յետոյ Խորհրդարանի ատենապետ եղած է: Նահանգային ընտրութեանց արդիւնքը և Խորհրդարանի բացման թուականը յայտնի չեն:

ՕՍՄԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Ա. ՆՇՏԱՇԵՐՋԱՆ

139rդ նիստ, 7 օգոստ. 1909

Երէկ, ուրբաթ, Երեսփ. Ժողովը ընդհանուր նիստ ունեցաւ Ամէտ Բիղա պէյի ատենապետութեամբ։ Վիճաբանութեան առարկայ եղաւ Ամասուրի մէջ շինուելիք երկաթուղիին խնդիրը։ Ամերիկեան ընկերութիւն մը, ինչպէս ծանուցուեցաւ, առաջարկած է Սամսունէն մինչեւ Սըվաղ, Խարբերդ ու Վան երկաթուղի շինել 2000 քիլոմեդր նշանակութեամբ։ Նախ կարդացուեցաւ հանրօգուտ շինութեանց յանձնաժողովին տեղեկագիրը, ինչպէս նաեւ այդ խնդրոյն վերաբերող օրինագիծ մը՝ ընդունուած նախարարաց Խորհուրդին կողմէ։ Ընկերութեան պայմաններն են 99 տարուան մենաշնորհ՝ առանց քիլոմեդրական երաշխաւորութեան՝ պայմանով որ գիծին երկու կողմը քսան քիլոմեդր տարածութեամբ գտնուող բոլոր հանքերուն շահագործումը իրեն տրուի։ Ընկերութիւնը, տասնհինգ տարուան շահագործումէ ետքը, յանձն կ'առնէ, եթէ գիծին ու հանքերուն հասոյթները իւրաքանչիւր քիլոմեդրի համար 12,000 ֆր.ը անցնին, կառավարութեան հատուցանել հանքերու օրինական տուրքը։ Նախնական քննութեանց համար ալ տասնչորս ամիս պայմանաժամ կը պահանջէ։ Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը Երեսփ. Ժողովէն արտօնութիւն կ'ուզէր այդ պայմաններուն մէջ պայմանագրութիւն կնքելու համար։ Ուրիշ ընկերութիւն մըն ալ միեւնոյն մենաշնորհը կ'ուզէր՝ Եւմուրթալըքի առջեւ նաւահանգիստ մը շինելու, գիծին երկու կողմը երեւան հանուելիք հանքերուն զուտ հասոյթին հարիւրին վեցը, շահագործման օրէն սկսելով, կառավարութեան տալու և նախնական քննութիւնները տասնչորս ամիսէն աւարտելու պայմանով։ Բարիզի Ֆրանքօֆոնման Ընկերութեան անունով Շարիկեան էֆ. ալ, Բերայէն ուղղուած հեռագրով մը, կը ծանուցանէր թէ այդ գիծին համար նոյն Ընկերութիւնն ալ մենաշնորհ կը պահանջէ, որով կը խնդրէր վիճաբանութիւնները յետաձգել։ Նաեւ կը բողոքէր իրենց պայմանները հրատարակուած չըլլալուն համար։ Հանրօգուտ շինութեանց յանձնաժողովը որոշած էր որ մենաշնորհը 99 տարի ըլլալու, նախնական քննութեանց մասին կառավարութեան դրամական աւանդ մը յանձնելու, այդ քննութիւնները որոշեալ ժամանակին աւարտելով տեղեկագիրները կառավարութեան յանձնելու և պայմանագրութիւնը Երեսփ. Ժողովին կողմէ վաւերացուելու պայմանով, պայմանագրութիւն կնքուի ամէնէն նպաստաւոր պայմանները առաջարկող ընկերութեան հետ։ Բոզմիտի էֆ. խօսք առնելով քննադատեց առաջարկուած պայմանագրութիւնը, որով այդքան քիլոմեդրական երաշխաւորութիւն պահանջուած է։ Ինչպէս Բարիզի Ֆրանքօֆոնման Ընկերութեան մասին ալ նոյնն է։ Ինչպէս նաե

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅԱՆ
ԱՐԱՐԱՏ, 20 օգոստոս — 1927 թվականի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅԱՆ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅԱՆ

Գյուղատնտեսական կայանի կազմակերպումը հանդիսանում է Արարատյան մարզի գյուղատնտեսության զարգացման գործում մի նոր էջ։ Կայանը հիմնադրվել է 1926 թվականի գարնանը։ Նրա գործունեությունը ուղղված է տեղական գյուղատնտեսական գիտելիքների ուսումնասիրությանը, գյուղացիներին գիտական խորհուրդներ տալուն, նոր մշակաբույսերի փորձարկմանը և գյուղատնտեսական մասսայական կուլտուրայի տարածմանը։

Կայանի գլխավոր նպատակն է ուսումնասիրել մարզի գյուղատնտեսական պայմանները, հողերը, ոռոգումը, մշակաբույսերի տեսակները և նրանց բերքատվությունը։ Կայանը ունի փորձարարական դաշտ, բուսաբանական պարտեզ, մեքենաների ու գործիքների մի փոքր պարկ։ Աշխատանքներին մասնակցում են գյուղատնտեսական տեխնիկումի ուսանողները։

Կայանի ղեկավարն է Ս. Ն. Ալեքսանդրյանը։ Նրա հետ աշխատում են գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Ի. Գրիգորյանը, գյուղատնտեսական տեխնիկի Ս. Ա. Մելքոնյանը և ուրիշներ։

Կայանի գործունեությունը սկսվեց Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսա գյուղի մոտ գտնվող 12 հեկտար հողամասի վրա։ Հողերը հիմնականում գորշ անտառային հողեր են, թեթև աղուտ։ Ոռոգումը կատարվում է Ղարաքիլիսայի գետակի ջրերով։

Գարնանը ցանվեց 8 հեկտար։ Ցանվեցին հացահատիկներ, հնդկաձավար, կարտոֆիլ, բանջարեղեն։ Ամառվա ընթացքում կատարվեց 3 ոռոգում։ Բերքը հավաքվեց հոկտեմբերին։ Ընդհանուր բերքը կազմեց 96 տոննա։ Հացահատիկի միջին բերքատվությունը հասավ 18 ցենտներ հեկտարից։

Կայանի գործունեությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց գյուղացիների մեջ։ Գյուղերից շատերը դիմեցին կայան՝ խորհուրդներ ստանալու։ Կայանը կազմակերպեց 4 դասընթաց գյուղացիների համար։ Դասընթացներին մասնակցեցին 120 գյուղացիներ։

Կայանի գործունեությունը դեռ թերի է։ Դրա պատճառը նյութական միջոցների սակավությունն է։ Կայանը ունի ընդամենը 3 հազար ռուբլի տարեկան։ Դրանից 1000 ռուբլի գնվեց գործիքներ, մնացածը գնաց աշխատանքի։ Կայանը չունի սեփական շենք, չունի ոռոգման սարքեր, չունի տրակտոր։

Կայանի ղեկավարությունը դիմում է կառավարությանը՝ հատկացնելու նրան 5 հազար ռուբլի։ Դրանից 1000 ռուբլի պետք է գնվի գործիքներ, 4 հազարը՝ ոռոգման սարքերի համար։

Գյուղատնտեսական կայանի գործունեությունը մեծ նշանակություն ունի Արարատյան մարզի գյուղատնտեսության զարգացման համար։ Կայանը պետք է դառնա գյուղատնտեսական գիտելիքների տարածման կենտրոն։ Դրա համար անհրաժեշտ է ուժեղացնել նրա նյութական բազան։

ԼՈՆԺԻՆ

Աշխարհիս միակ ամենարնչիր ժամացոյցը, պատշաճապէս ընդունուած Միացեալ Նահանգներու եւ Իտալիոյ ծովային նախարարութիւններէն:

ՈՍԿԻ, ԱՐԾԱԹ, ՄԵՏԱՂ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ

Ինչպէս կիրթ ճաշակի և ուղիղ դատողութեան տէր ամէն գնորդ նախապատուութիւն կուտայ ԼՈՆԺԻՆ ժամացոյցին. — Որովհետեւ ճշդութիւն, տոկունութիւն, նրբարուեստ աշխատութիւն և վայելչաձեւութիւն անոր գլխաւոր արժանիքը կը կազմեն և լրջօրէն երաշխաւորուած են։ Ինչպէս ԼՈՆԺԻՆ ժամացոյցը ամէնէն բազմաթիւ և ամենաբարձր վարձատրութեանց արժանացած է.—Որովհետեւ հիանալի կերպով կ'իրականացնէ արուեստին բոլոր կատարելագործումներն և իր նշանաւոր արդիւնքներով միշտ կը գերազանցէ համանման արտադրութիւնները։

5 մեծագոյն մրցանակներ.—*Անվերս* (1885), *Բարիզ* (1889), *Պրիւսէլ* (1897), *Բարիզ* (1900), *Միլան* (1906)։
2 արտաքոյ մրցման, անդամ ժիւռիի.— *ժընէվ* (1896), *Թուն* (1899)։
4 Սեռիի մրցանակներ, 35է աւելի ուրիշ մրցանակներ Նեօշատէլի դիտարանէն։
16 շքադրամներ.— *Բարիզ*, *Վիեննա*, *Ֆիլատէլֆիա*, *Անվերս Ամսթէրտամ*, *Զիւրիխ*, *Լեն.*, *Լեն.*։

Թուրքիոյ համար ընդհանուր ներկայացուցիչ **ՆԱՍԻՊ Խ. ՋԷԶՎԷՃԵԱՆ** եւ ՈՐԴԻ Մեծ Շուկայ, Մահճազանըլար, 44 — 46. Կ. ՊՈԼԻՍ

Կը խնդրուի գաւառի մէջ սոյն վաճառատան բազմաթիւ յաճախորդներէն, պէտք ներկայանալէն առնուազն մէկ ամիս առաջ ղրկել իրենց ապսպրանքները, յապաղմանց չենթարկուելու համար։

Ցիշեալ վաճառատան մէջ կը գտնուին նաեւ ամէն տեսակ գոհարեղէններ եւ ոսկի շղթաներ։ 50—11

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Դշ. սեպտ. 7 (Ն. Տ.)։ Թուրքերէնի և ֆրանսերէնի դասընթացքը աւելի զօրացնելու համար՝ ուսուցչական մարմինին վրայ աւելցուցած են Ս. էֆ. Սրենց և Զիա պէյ։

Դիշերօթիկներուն տարեթոշակն է 16 օսմ. ոսկի, կէսը մուտքի ատեն և կէսը Մնունդին վճարելի։ Իւրաքանչիւր աշակերտ գանձապետին յանձնելու է 1 օսմ. ոսկի՝ դիրքի և ուրիշ դպրոցական պէտքերու համար. աւելցածը իրեն կը վերադարձուի տարիին վերջը։ Մնունդի կամ Զատիկի արձակուրդին վարժարան մնացող աշակերտները 3 մէճիտ պիտի վճարեն։

Նամակատան միջոցաւ դրամ կամ ծրար պէտք է ղրկել Իզմիր, Կարապետ աղա Պողոսեանի հասցէին։

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Ս. Ռ. Բէթի, կամ վարժարանիս գործակատար Գրիգոր էֆ. Շահպազեանի Պայպլը Հաուս, Կ. Պոլիս, ժամ 3½էն 5½ (Ը. Ե.) կամ Տնօրէնութեան՝ Պարտիզակ։

Բարձր. վարժարանի յարակից Ֆավրի կրթարանին տարեթոշակն է 12 ոսկի, որուն կէսը պէտք է վճարուի Սեպտ.ին, իսկ միւս կէսը Մնունդին։ 12 ոսկիէն պակաս վճարող աշակերտներ առտնին գործերով պարապելով պէտք է լեցնեն սահմանուած 12 ոսկիի թոշակը։ Մուտքի ատեն իւրաքանչիւր աշակերտ մանր ծախքերու համար պարտի վճարել 20 ղրուշ։ Աշակերտները միասին պէտք է բերեն անկողին, սաւան, փեշտիմալ և.։

14—9

ԱԹԷՆՔԻ ՊԱՆՔԱ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽՔ ԱՄՈՂՋԱՊԷՍ ՎՃԱՐՈՒԱԾ

50,000,000 Տրամքմի

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ԵՒ ԲԱԺԷՆՔ

Մասնաճիւղեր ունի Կ. Պոլիս եւ գրասենեակներ՝ Ղալաթիոյ եւ Պոլսոյ կողմը Լոնտոն, Ադրիանոպիս, Դանիրէ, Սկանտիկ, Իզմիր, Գիրէսոն, Բաղդատ, Վօյս, Շիրա, Քալամարա, Քանէ եւ Քանտիա (Կրէտէ)։

Դրամագլուխին և առանձնացած դրամին ու արժեթուղթերուն արժէքը, Օգոստոս ամսուն, կը հասնի 260,000,000 տրամիի։

Աթէնքի Պանքան կը զբաղի Պանքայի ամէն տեսակ գործառնութիւններով։ Փոխառութիւններ կ'ընէ վճառագրեր, արժեթուղթերու վրայ և Եւրոպական Թուրքիոյ վրայ քաղաքաց փոխառութիւններ ալ կը տրուին։

Աթէնքի Պանքան հաշուբնթացներ կը բանայ, չէքեր, վարկագիրներ կը հանէ, նեռագրական հրամանով վճարումներ կը կատարէ Թուրքիոյ գլխաւոր քաղաքներու և արտասահմանի մէջ։ Սովորական հրամանները կը կատարէ. թէ՛ մեր հրապարակին և թէ ուրիշ հրապարակներուն վրայ։ Հրամանագրերուն դիմաց ապահովագրեալ դիրքով։

Շատ փաքր վարձքի մը փոխարէն արժեթուղթեր կը պահէ, աւանդի ձեւով և սեղմուած ծրարներ եւ առանձնարան պայմանով։ Ամէն կարգի կազմներ կը դանձէ և գերդի գործողութիւններ կը կատարէ։ Աթէնքի Պանքան ճանաչուած արտասահմանեան ասակ կը դնէ ազգովանութի խոսքեր, փոքր վարձքերով։

Աւանդի ձիւղ

Աթէնքի Պանքան իրեն աւանդ կ'ընդունի գրամ և արժեթուղթ, առ տոկոսներ վճարելով։

Ուղղակի ասոնց դրամ քաշելու պայմանները

	3%
Վեց ամսուան համար	3½%
Մէկ տարուան »	4 —
Երկու » և աւելի	5 —

Աւանդ ձգուած դրամներէն կը վճարուին այն դրամով որով Պանքան ձգուած են։ Տոկոսները կը վճարուին ամէն տարուան Յունուար 2էն և Յուլիս 1էն։

Մասնաւոր տեսակներ՝ 4% տոկոսով

Աթէնքի Պանքան իր յաճախորդներուն մէջ փոքր դասակարգեր ունենալով և փոխադրելով ամէն դիւրութիւն ընծայել, անոնց տրամադրութեան տակ կը դնէ մասնաւոր աւանդներու տեսակներ, որոնց մէջ կրնան ազատաբար աստուածային 100 ոսկիի աւանդ գումար մը։ Այդ գրամը 4% տոկոս կը բերէ և մասնակի վճարումներ կը կատարուին, առնուազն 58 ղրուշ տոկոսով։

ՕՍՄ. ՀԱՆՐ. ՊԱՐՏԻԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Ազդ.—1881 դեկտ. 8/20 թուականի կայս. հրամանագրին Ե. և ԺԳ. յօդուածներուն և 1903 սեպտ. 1/14 թուականի յարակից հրամանագրին ԺԲ. յօդուածին համաձայն, Բումէլի երկաթուղիի սահմանները. 22,612, 50,447, 212,369, 936,646, 1,046,875, 1,122,628, 1,122,629, 1,122,630, 1,711,099, 1,711,100, 1,768,679 1,776,583, 1,931,864, 1,931,865, որոնք 1876 հոկտ. 1ի 58րդ վիճակահանութեան մէջ պարգեւ շահած ու ներկայացուած չեն, 1909 հոկտ. 1ին ջնջուած պիտի համարուին։ 9—2

Կ. Պոլիս, 1 օգոստոս 1909

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աւստրեւամերիկեան

(Cie. de navigation Austro-Americana)

ԱՆԴՐԱՏԼԱՆՏԵԱՆ 45 ՇՈԳԵՆԱՒ

Կանոնաւոր մեկնում ամէն հինգշաբթի օր։ Մասնաւոր դիւրութիւններ կ'ընծայուին Հայ ճամբորդներուն։ Շոգենաւերը կրկին պտուտակ ունին։ Սնունդը խնամեալ է։ Ելեկտրական օդափոխում և լոյս։ Մարքոնիի դրութեամբ անթել հեռագիր։ Բժիշկ և դեղ ձրի։

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել գլխաւոր գործակալութեան, Ղալաթիա, Բըսթըմ խան, թիւ 18—19։

Ընդհ. գործակալ
ԹԷՕՏՕՐ ՔՈՒՐՄՈՒԶԻ

ՊԱՆՔ ՏԷ ՍԱԼՕՆԻՔ

BANQUE DE SALONIQUE

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 10,000,000 ֆր.

ՎՃՌ. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8 Մարտ 1906ին 8,000,000 ֆր.

ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8 Մարտ 1906ին 3,700,000 ֆր.

ԿԵԴՐՈՆՆ Է ՍԵԼԱՆԻԿ

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Դամասկոս, Ե. Պոլիս (Ղալաթիա և Պերա), Մանաստիր, Մակիտոնիա եւ Եւրոպիս։

ՊԱՆՔ ՏԷ ՍԱԼՕՆԻՔ խնամով կը կատարէ Կ. Պոլսոյ, Եւրոպական Թուրքիոյ եւ Ասիոյ և Եգիպտոսի հրամայագրերուն, թղթադրամներ մնում սատար քաղաքներուն վրայ քաշուած փոխառութիւններ։ Զէքերու հաշիւներ կը բանայ։ Աթոռաթղթերու վրայ փոխառութիւններ կ'ընէ։ Սովորականէն հրամաններ կը կատարէ եւրոպական բոլոր հրապարակներուն վրայ։ Զէքեր եւ վարկագիրներ կը հանէ Թուրքիոյ և արտասահմանի բոլոր քաղաքներուն վրայ։ Աւանդներ կ'ընդունի ի տես վճարելի և 3, 6, 9, 12 ամսուան ոչ պայմանաժամանակով։ Վերջապէս տեղական բոլոր գործառնութիւններ։ Պանք տէ Սալոնիք փոքր վճարումներու համար ունի Թուղթադրամներ Մեսաստի մը ունի, շատ դիւրաւորապէս տարբերանով։

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ

Ն. ԲԱԴԷ ԵՒ ԸՆԿ

ՍՊԱՍՈՒԱԾ ՇՈԳԵՆԱՒԵՐ

Օգս. 24ին, Ֆրիժի, Սև Ծովէն
Օգս. 31ին, Ժօնի, *Մարսիլիայէն*
Սեպտ. 7ին, Իմբրոսի, Սև Ծովէն

ՄԵԿՆՈՒՄՆԵՐ

Օգս. 52ին, Ֆրիժի, *Մարսիլիա*։
Սեպտ. 1ին, Իսնի Սև Ծով
Սեպտ. 8ին, Իմբրոսի, *Մարսիլիա*։

Ա. կարգ Բարիզի համար 200 ֆր.
» » *Մարսիլիոյ* » 160 »
Բ. » Բարիզի » 150 »
» » *Մարսիլիոյ* » 120 »
Ա. կարգ Լոնտոնի համար 248.35 ֆր.։
Բ. կարգ 185.10 ֆր. (Տիրոջ համարով)։

Տեղեկութեանց համար դիմել Գարտիկոլին՝ Գոլիմոնէ, քարտէին վրայ։

15 Թ. ՌԸՊՈՒԼ

ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ

Թի ՕՐԻԷՆԹԱԼ

ՔԷՐԲԷԹ ՄԷՆԻՈՒՖԷՔՋԸՐ ԼԻՄԻԹԸՏ

Սբ Ամալոյեան խան, Պաղչէ-Գաբու, ՊՈԼԻՍ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԳԵՐՈՒ ՄԵԾ ՄԹԵՐՔ ԱՄԷՆ ԲՍԱԿԻ ՄԱՏՋԵԼԻ

ՆԿԱՐՆԵՐՈՒ ՀՈԼԻ ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆ

Վստահելի վաճառատուն

ՈՐՈԾ ԳԻԾ

11—10

ՇԻՐԲԷԹԻ ԽԱԳԻՐԻ

Ազդ.— Շիրբէթի Խայրիէի վարչութիւնը նուազուրդի կը դնէ ամբողջ բրէնկոթ՝ մէջը ըլլալով նաեւ ամրան բաճկոն նաւապետներու համար, քարօթ՝ նաւապետներու համար, ամբողջ բրէնկոթ՝ մեքենավարներուն համար, ամբողջ վէսթօն՝ ղեկավարներուն համար, ամբողջ վէսթօն՝ մէմուրներուն համար, ֆանէլա եւ բանթալոն՝ նուազներուն համար, վէսթօն եւ բանթալոն քամարօթներուն համար։ Այս զգեստները պէտք է շինուին նմուշին համաձայն։ Նուազուրդը տեղի պիտի ունենայ 1909 օգոստ. 15/28ին։ Նուազուրդին մասնակցիլ փափաքողներէն կը խնդրուի մինչեւ այդ թուականը ներկայանալ ընկերութեան կեդրոնատեղին, Սիրքէճի։

PHŒNIX ASSURANCE LD. Co

"ՖԻՆԻՔՍ,,

ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782ԻՆ
ԿԸ ԳՈՐԾԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԷՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ Անգլ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ սոսկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մին է, ծանօթ իր պատուաւորութեամբ և գլաստուց մէջ իր անմիջական վճարումներով։

ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հրդեհի և կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ և շարժուն ստացուածք, յոյժ նպաստաւոր պայմաններով։

Ընկերութեան Եւանգանեն եղան է
ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՈՒՑ

Ցարդ վճարուած է առաւել քան 27000000 անգլիական ոսկի։

Ընդհանուր գործակալ Պոլսոյ և գաւառաց
Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վիքալիս խան, Պանք Օրոմանի մօտ, Ղալաթիա։

Khedivial Mail Line

(Քէտիվիալ Մէյլ Լայն)

Շոգենաւային Ընկերութ.

Շաբաթական ամէնեն արագ երթեւեկը Պոլսոյ եւ Աղեքսանդրիոյ միջեւ։

«Սաիտիէ» շոգենաւը, նաւապետ Ֆրինալէյ, կիրակի, 22 օգոստոս 1909 (Ը. Ե.), կէս օրին Աղեքսանդրիայէն հոս կը ժամանէ. իսկ երեքշաբթի 24 օգոստ. 1909 կէս օրէն ետքը ժամը 3ին պիտի մեկնի Աղեքսանդրիա, հանդիպելով Իզմիրը և Պիրէան։

ՍՈՒԷՅԻՈՑ ԳԻԾ

«Մէնղալէհ» շոգենաւը նաւապետ Վանթէր օգոստ. 28ին ճամբայ պիտի ելլէ դէպի Կելիպոլը, Տարանէլ, Միտիլլի, Իզմիր, Սագրզ, Հոդոս, Մէրսին, Իսքէնտէրուն, Սուրիական Տրիպոլիս, Պէյրութ Հայֆա, Եաֆա, Բորթ-Սաիտ և Աղեքսանդրիա։

Տեղեկութեանց համար դիմել Ընկերութեան կեդրոնատեղին, Ղալաթիա, քաղաքային վրայ, Մէյմէնէթլի խան, իսկ մասնաւորապէս՝ Պոլիս, Վալիտէ Սուլթան խան։

ԹԵՐԹՕՆ "ԱՐԵՒԵԼՔ,,Ի (13)

ԺԱՆ ՏԸ ԼԱ ՇԻՐ

ՋՈՒՐԻՆ ՄԷՋ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԸ

ԱՐԿԱԾԱԽՆԴՐԱԿԱՆ ԵՒ ՍԻՐԱՅԻՆ ՎԷՊ

ՍՈՍ. ՋԻՆ ՄԱՍ
ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՂԶԻՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Ս.

Զարհուրանք

—Այո՛... Լը Բէբպալէքի հրամանատարութեան տակ կը գտնուի... Տարաբա՜խտ... Իրաւունք ունի եղեր... Իր բնաջնջները չէին խաբած զինքը։

Սիլոնի հրամանատարը, գլխարկը հանելով, տխրօրէն ողջունեց նաւային գընդապետը և իր մարդիկը, որոնք քիչ մը անդին կը մեռնէին իրենց յածաւորակին բեկորներուն հետ ծովամոյն եղած...։

Ճիպրալթարէն հեռագիրներ քաշուեցան աղէտի մասին, որոնք ընդհանուր սարսափ պիտի տարածէին, աշխարհի չըբնջանը ընելով մէկ քանի ժամէն։ Ճիպրալթարի մէջ Անգլիա կը կորսնցնէր իր ամենէն գեղեցիկ զրահաւորներէն մէկը և 435 հոգի, որոնց մէջ կար նաև ծովակալ մը. Ֆրանսա՝ իր լաւագոյն յածաւորակներէն մէկը և 248 հոգի։ Այդ աղէտը պատահած էր փետր 5ին, կէս օրէն ժամ մը յետոյ։

Իրիկուան ժամը իններն, Ռօնի վրայ գտնուող սքանչելի կամուրջը, որ Պօքէրը Թարասքոնի կը միացնէր, յանկարծ օդը կ'ելլէր...։

Ցաղրդ օրը, փետր. 6, Իտալիոյ զինուորական նաւանանգստին՝ Սբէցցիայի մէջ օդը կ'ելլէր Կարիպալդի զրահաւոր յածաւորակը, իր տակ թաղելով 450 հոգի։

Բարէէսին վրայ կարելի էր հետեւիլ այդ խորհրդաւոր աղէտին կանոնաւոր ու անողոք գնացքին։ Հիւսիսային ծովուն մէջ Հէլիգոլանտէն մեկնելով՝ Մանչը անցած և Բօրթմութի և Շէրպուրի մէջ կանգ առած էր։ Ցետոյ, Ադրիատիկէն անցնելով, Լիզպոնա հանդիպած ու Ճիպրալթարի նեղուցը անցած էր. ապա մինչեւ Միջերկրական ելլելով՝ իր ներկայութիւնը զգացուցած էր Սբէցցիայի մէջ։ Քիչ ետքը, իր հրաշալի արագութեամբ, Սեւ ծով կը մտնէր և Սեվաստոփոլի առջեւ օդը կը հանէր ռուսական Բանքիէիմօն զրահաւորը։ Վօսփոր կը դառնար, ճամբուն վրայ խորտակելով Սելիմիէ անուն օսմ. յածաւորակը։ Իր ճամբան շարունակելով՝ Սուէզի ջրանցքը կը մտնէր և Սուէզի քարափին մէկ մասը կը խորտակէր, մինչ իր ընթացքը՝ չէին կրնար կասեցնել այն փակոցները, որոնք անապարանօք հաստատուած էին հոն։

Կարմիր ծով իջնելով՝ իր ներկայութիւնը կը զգացնէր Ատէնի ծոցին մէջ, յունական երկու առեւտրական նաւերու խորտակումով։ Զորս օր յետոյ, անգլ. յածաւորակ մը կ'անհետանէր Սէյլանի ջուրերուն մէջ, իսկ չարաթ մը ետքը՝ ամերիկեան զրահաւոր մը օդը կը հանէր Ֆիլիպեանց արեւելեան կղզիներ։ Շանթի պէս կ'իյնար Եոքոհամայի վրայ, և նաւանգստին մէջ իսկ կ'ընկղմէր ճարոնական երկու զրահաւոր՝ Բարորի և Միֆազա...։

Ուռճապը պատեց երկրագունդը, ահարեկելով տէրութիւնները, քայքայելով վարչական կեանքը, կասեցնելով վաճառականութիւնը, անդամալուծելով ճարտարագործութիւնը։ Բայց կառավարութիւնները ընդհօտպ իրենց պաշարիւնութիւնը վերստացան. իրենց ցամաքային և ծովային բանակները չարժման մէջ կը դնէին, ծովեղերքներու պաշտպանութիւնը կը բազմապատկէին, և մեծ տակնուվրայութեամբ կը պատրաստուէին կռուելու առեղծուածային ու աներեւոյթ թշնամիին դէմ։ Բաղաքական կուսակցութիւնները կը մոռնային իրենց անհամաձայնութիւնները, ջանալով միանալ հասարակաց թշնամիին դէմ։ Միայն անիշխանական քմահիներ, աւելի ազմկայարոյց և ազդեցիկ, մարդկային ընկերութիւնը անարգող այդ խորհրդաւոր Անծանօթին թեր կ'ելլէին։ Ատոնք կը փորձէին ժողովուրդը ոտքի հանել, Անծանօթին սա խոստումները պարզելով աչքերնուն առջեւ. Ո՛չ հանրային պարտք, ո՛չ տուրք և ոչ մնայուն բանակ։ Եւրոպայի, Ճարոնի և Ամերիկայի գործաւորական մեծ կեդրոններուն մէջ յեղափոխական ըմբոստութիւններ կը ծագէին. բայց կարելի եղած էր զսպել զանոնք մէկ քանի ժամուան մէջ, որովհետեւ խուովարարները իրենց դէմ ունէին ո՛չ միայն ոստիկանական ուժերը, այլ բոլոր բանակները՝ պատերազմական վիճակի մէջ։ Ռուսիոյ մէջ զինուորները կը յաղթէին ապստամբել. աւելի բազմաթիւ ու համառեռ ուրիշ գունդերու կողմէ կը կոտորուէին ըմբոստները։ Իսկ Սեւ ծովու ամբողջ նաւատորմը կ'ըմբոստանար։ Վօսփորէն կ'անցնէր, առանց դիմադրութիւն գտնելու օսմ. նաւատորմին կողմէ։

Ռուսական նաւատորմը սկսած էր Թափառել Միջերկրականի մէջ, իր կայմերուն վրայ կարմիր դրօշներ պարզած, ուր ոսկեգոծ տառերով ասեղնագործուած էին. «Կեցցէ՛ Անծանօթը։»

(Շարունակելի)

Հրատարակ՝ ՊԱՐԳԵՎ ՓՕՓՈՒՄԵԱՆ